ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

«02» ՓԵՏՐՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան **03.02.2023թ.**

2023 թվականի փետրվարի 02-ին անցկացվեց ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի /այսուհետ՝ Խորհուրդ/ հեռակա քվեարկություն:

Քվեարկության համար նյութերը փետրվարի 02–ին ժամը 09:40–ին հեռակա կարգով ներկայացվեցին Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Խորհրդի էլեկտրոնային քվեարկությունը սկսվեց 2023թ.-ի փետրվարի 02–ին և ավարտվեց փետրվարի 03-ին:

Քվեարկության օրակարգային հարցեր՝

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2022թ. տարեկան հաշվետվությանը :

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2022թ. չորս եռամսյակների կատարողականի գնահատումը:

3.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2022թ. 2-րդ կիսամյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը:

Քվեարկությանը մասնակցում էին՝

Վ.Քերոբյան	– ՀՀ էկոնոմիկայի նախարար
Ա.Հարությունյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Լ.Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Ն.Տերյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա.Դանիելյան	– ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Է.Հակոբյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Կ.Չիլինգարյան	- «Սպառողների խորհրդատվության կենտրոն» ՀԿ-ի նախագահ
Կ.Սահակյան	- ԵՊՀ դասախոս, տնտեսական գիտությունների թեկնածու
Է. Էլբակյան	- ՀԱՊՀ-ի մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար

Էլեկտրոնային քվեարկության արդյունքները օրակարգային հարցերի վերաբերյալ՝

Վ.Քերոբյանը՝	չի քվեարկել
Ա.Դանիելյան՝	կողմ
Ա. Հարությունյանը՝	կողմ
Լ.Նանուշյանը՝	կողմ
Ն.Տերյանը՝	չի քվեարկել
Է.Հակոբյան՝	կողմ
Կ.Չիլինգարյանը ՝	կողմ
Կ.Սահակյանը՝	կողմ
Է. Էլբակյանը՝	կողմ
Տ. Քեյանը՝	կողմ

Խորհուրդը 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշեց հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2022թ. տարեկան հաշվետվությանը, հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2022թ. չորս եռամսյակների կատարողականի գնահատումը և հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2022թ. 2-րդ կիսամյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ _____ **Վ.Քերոբյան**

ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ **Գ.Սահակյան**

ստորագրություն